«Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերի 2019 թվականի ապրիլի 30-ի տարեկան ընդհանուր ժողովը թիվ 2019-2-3 Լ որոշմամբ որոշել է՝

1. «Արդշինբանկ» ՓԲԸ «Նախորդ տարիների շահույթ/վնաս» հաշվից (կուտակված շահույթ) բաշխել շահութաբաժիններ մինչև 1 217 224 000 (մեկ միլիարդ երկու հարյուր տասնյոթ միլիոն երկու հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամի չափով:

2. Կուտակված շահութաբաժինների փաստացի վճարումն իրականացնել Բանկի Խորհրդի համապատասխան որոշումներով՝ միանվագ կամ մաս-մաս փոխանցմամբ մինչև 31.12.2019թ. (երեսունմեկը դեկտեմբերի երկու հազար տասնինը թվական) ներառյալ, պայմանով, որ դա չի հանգեցնի Բանկի կողմից օրենսդրական և/կամ պայմանագրային պարտավորությունների խախտման:

3. Կուտակված շահութաբաժինները վճարել Բանկի այն սովորական բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերին, ովքեր ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ 2019 թվականի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ՝ ըստ կանոնադրական կապիտալում նրանց մասնակցության համամասնության: Կուտակված շահութաբաժինների վճարումն իրականացնել համապատասխան գումարը «Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերի բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող աշխատանքային օրվանից: